Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 111-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս 3

2. Ամփոփագիր 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ 4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ 6

5. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ. 10

6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ.....13

7. Այլ փաստեր.....15

8. Հետհսկողական գործընթաց.....16

9. Առաջարկություններ 17

1. Ներածական մաս

Հաշվեքննության հիմքը	2021թ. փետրվարի 10-ի թիվ 34-Ա որոշման հիման վրա ((հաշվեքննութան ժամկետը փոփոխվել է մինչև ապրիլի 30-ը ներառյալ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի ապրիլի 9-ի թիվ 90-Ա որոշման հիման վրա)
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննության առարկայի չափանիշները	2016 թվականի դեկտեմբերի 16-ի ''Գնումների մասին'' թիվ ՀՕ-21-Ն ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշում
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021թ. փետրվարի 16-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ամփոփագիր

Առկա է խեղաթյուրում ստացված տեղեկատվության և ոչ ֆինանսական ցուցանիշներում արտացոլված շահառուների թվաքանակների միջև:

Կազմակերպված գնման ընթացակարգերի հրապարակման ենթակա համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հրապարակված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական անհամապատսխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

Հայտնաբերված խեղաթյուրումների ցանկ

Հ/Հ	Միջոցառման հոդված	Միջոցառման անվանում	Խեղաթյուրում
1.	1102-12003	Աշխատանքային կենսաթոշակներ	Շահառուներ, ըստ ստացված տեղեկատվության 478,493 անձ Շահառուներ, ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների440,945
	1102-12003	Գործի համար	
2.		703892	Հաշվարկ-կարգադրությունում ստաժի վերջ նշվել է 01.12.2019 թ., ինչի արդյունքում աշխատանքային ստաժը 1 ամիսով պակաս է հաշվարկվել: Ինչպես նաև ստացիոնար ուսուցումը հաշվարկվել է 4 տարի 6 ամիս 13 օր (02.01.1973-15.07.1977թ.), սակայն դիպլոմի համաձայն ուսուցումը տևել է 4 տարի 11 ամիս 13 օր (01.09.1972թ.ից մինչև 15.07.1977)
3.		703031	Հաշվարկ կարգադրությունում կենսթոշակի չափը հաշվարկվել է 57050 ՀՀ դրամ, ստացված տեղեկատվության (շտեմարանի) համաձայն ընթացիկ գումարը կազմել է ՀՀ 55800 դրամ, սակայն վերահաշվարկի

			վերաբերյալ փաստաթղթեր առկա չեն: Տարբերությունը կազմում է 1250 ՀՀ դրամ:
4.		703498	Հաշվարկ կարգադրությունում կենսթոշակի չափը հաշվարկվել է 49850 ՀՀ դրամ, ստացված տեղեկատվության (շտեմարանի) համաձայն ընթացիկ գումարը կազմել է 55800 դրամ, սակայն վերահաշվարկի վերաբերյալ փաստաթղթեր առկա չեն: Տարբերությունը կազմում է 5950 ՀՀ դրամ:

Հայտնաբերված անհամապատասխանությունների ցանկ

Հ/Հ	Անհամապատասխանության տեսակ	Անհամապատասխանությունը
1.	Գնումների գործընթաց	ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվել է 20.01.20թ., իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 12.02.20թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ուստի այն հրապարակվել է 14 աշխատանքային օր ուշացումով:
2.	Գնումների գործընթաց	1.ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-20/2 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում՝ գնահատող հանձնաժողովի 13.01.20թ. նիստում 11-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած, սակայն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 22.01.20թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում

		պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը, ուստի այն հրապարակվել է 6 աշխատանքային օր ուշացումով:

4.Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները

ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) ՀՀ 2020թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 387,553,093.75 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 434,323,504.95 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար փաստը կազմել է 425,078,271.73 հազ. դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստը կազմել է 352,061,838.83 հազ. դրամ, հաշվետու տարվա փաստը ավելացել է 20.7%-ի չափով:

Նշանակալի հաշիվներ են ընտրվել 1068-12002 Երեխայի ծննդյան միանվագ նպաստ (2020 թ-ին 16,134,100.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1082-12002 Մայրության նպաստ (2020 թ-ին 11,686,823.07 հազ.դրամ փաստացի ծախս) 1102-12001 Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ (2020 թ-ին 31,048,958.52 հազ.դրամ փաստացի ծախս), 1102-12003 Աշխատանքային կենսաթոշակներ (2020 թ-ին 237,809,663.94 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12001 Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ (2020 թ-ին 23,562,704.87 հազ.դրամ փաստացի ծախս), 1225 Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն (2020 թ-ին 24,698,507.69 հազ.դրամ փաստացի ծախս) ծրագրերը: Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումները ներկայացված են ստորև:

Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ

Աղյուսակ 1

	Ծրագիր/միջոցառում	Գումար, հազ.դրամ
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	19,873,928.6
1068-11001	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում	14,526.70

1068-12001	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	3,725,301.92
1068-12002	Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	16,134,100.00
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	16,567,759.8
1082-11001	Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն	3,299.81
1082-12001	Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ	4,800,862.00
1082-12002	Մայրության նպաստ	11,686,823.07
1082-12003	Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում	76,774.96
1102	Կենսաթոշակային ապահովություն՝ այդ թվում	273,738,902.7
1102-11001	Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում	67,560.00
1102-11002	Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում	1,389,685.54
1102-11003	Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն	588.00
1102-12001	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	31,048,958.52
1102-12002	Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	589,734.54
1102-12003	Աշխատանքային կենսաթոշակներ	237,809,663.94
1102-12004	ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	2,832,712.18
1205	Սոցիալական ապահովություն՝ այդ թվում	44,516,276.7
1205-12001	Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ	23,562,704.87
1205-12002	Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	5,793,212.97
1205-12004	Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին	91,100.00
1205-12005	Աջակցություն զոհվածների ընտանիքներին	2,199,000.00
1205-12007	ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն	3,186.70
1205-12010	Ռազմական դրությամբ պայմանավորված միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին	7,009,112.19
1205-12011	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին	4,065,000.00
1205-12014	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական	500,000.00

	աջակցություն վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին	
1205-12015	Ռազմական դրությամբ պայմանավորված՛ աջակցություն Արցախի բնակչությանը	1,000,000.00
1205-12016	Ռազմական դրությամբ պայմանավորված՛ դրամական աջակցություն Արցախի Հանրապետությունում հաշվառված եւ հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին	0
1205-12019	Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի նախադպրոցական տարիքի երեխաների ամանորյա աջակցություն	292,960.00
1225	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն՝ այդ թվում	24,698,507.7
1225-12001	Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված ծնողներին հրատապ դրամական աջակցություն	182,000.00
1225-12002	Կորոնավիրուսի (COVID-19)հետևանքով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	291.50
1225-12003	Կորոնավիրուսի (COVID-19) հետևանքով աշխատանքից ազատված անձանց միանվագ աջակցություն (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վեցերորդ միջոցառում)	505,036.00
1225-12004	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կանանց (Կորոնովիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման յոթերորդ միջոցառում)	933,572.50
1225-12007	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 50-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 11 միջոցառում)	786,219.30
1225-12008	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով գոյացած դժվարությունների արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի և էլ. էներգիայի դիմաց վճարի 30-%-ի չափով աջակցություն (Կորոնովիրուսի տնտ. հետևանքների չեզոքացման 12	1,842,928.67

	միջոցառում)	
1225-12009	Կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխ. շուկ. գոյացած դժվ. արդյունքում սոց. խնդիրների առջև կանգնած մի խումբ անձանց սպառած բնական գազի, էլ. էներգիայի և խմելու ջրի դիմաց վճարի 30-50%-ի չափով աջակցություն (Կորոն. տնտ. հետ. չեզոքացման 16 միջ.)	2,145,656.43
1225-12010	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19)տարածման հետևանքով մանավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ութերորդ միջոցառում)	8,953,170.90
1225-12011	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման իններորդ միջոցառում)	4,748,903.99
1225-12012	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով առաջացած դժվարությունների արդյուքում սոցիալական խնդիրների առջև կանգնած սոցիալապես անապահով ընտանիքներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասներեքերորդ միջոցառում)	1,207,800.40
1225-12013	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների վարձու աշխատողներին, քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառում)	3,050,208.00
1225-12014	Աջակցություն կորոնավիրուսի (COVID-19) տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խմշնդիրների առջև կանգնած Հի քաղաքացիներին (Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներկուերորդ միջոցառում)	342,720.00

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն (1225) ծրագրի միջոցառումների հաշվեքննությունը կիրականացվի ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 14-Ա որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում:

Գնումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ

Սոցիալական ապահովության ծառայության 2020 թվականի տարեսկզբին հաստատված գնումների պլանով նախատեսվել է 2,174,845.1 հազ. դրամ գումար: Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2020թ. գնումների պլանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կազմակերպված թվով 121 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 140 պայմանագիր ընդհանուր 2,104,496.8 հազ. դրամ պայմանագրային արժեքով, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, բանկային, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, ինչպես նաև հրշեջ անվտանգության մասնագիտացված և անվտանգության ուսուցման ծառայությունների համար կնքվել է թվով 48 պայմանագիր ընդհանուր 1,898,499.8 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Նշված պայմանագրերի շրջանակներում ներկայացված կատարողականներով վճարվել է ընդհանուր 2,052,744.6 հազ. դրամ, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, բանկային, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, ինչպես նաև հրշեջ անվտանգության մասնագիտացված և անվտանգության ուսուցման ծառայությունների համար՝ 1,857,240.3 հազ. դրամ:

5. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում աշխատանքային կենսաթոշակները ըստ տարեկան ճշտված պլանի պետք է տրամադրվեր 451,436 շահառուի: 2020թ. ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի տրամադրվել է 440,945 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 10,491-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է պլանային (իրավունք ձեռք բերած) թվաքանակի և փաստացի (միջին տարեկան) թվաքանակով, ինչպես նաև հանրապետությունից բացակայելու հանգամանքով:

Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզվեց, որ 2020թ. ընթացքում աշխատանքային կենաաթոշակ է վճարվել 478,493 շահառուի (շահառուների թվաքանակը ճշգրտված չէ ետ վերադարձերի մասով):

Առկա է խեղաթյուրում ոչ ֆինանսական ցուցանիշներում նշված շահառուների քանակի և ստացված տեղեկատվության միջև: Մասնավորապես՝ հաշվետվությունում 37,548 շահառու պակաս է արտացոլված:

Մինչդեռ ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 10,491-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է պլանային (իրավունք ձեռք բերած) թվաքանակի և փաստացի (միջին տարեկան) թվաքանակով, ինչպես նաև հանրապետությունից բացակայելու հանգամանքով:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություններ.

Աշխատանքային կենսաթոշակների տարեկան ճշտված պլանը կազմել է 451,436 շահառու: 2020թ ընթացքում փաստացի ֆինանսավորվել է ամսական միջինը 440,945: Ճշտված պլանի նկատմամբ փաստացի թվաքանակի տարբերությունը կազմում է 451,436-440,945=10,491:

Համաձայն Տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության (այսուհետ՝ SS) դիտարկման՝ հաշվեքննության արձանագրությունում ներկայացված է շահառուների անվանական թվաքանակը՝ միջին թվաբանական քանակի փոխարեն: Համաձայն SS դիտարկման (Տեղեկանք 1) 2020թ. ընթացքում վճարված 478,493 անուն-շահառուների թվաքանակը հավասարազոր է միջին ամսական 441,138 վճարումների քանակին (=(հունվար շահառու + փետրվար շահառու+. . . + դեկտեմբեր շահառու) / 12 = 5,293,659/12): Ըստ այդմ ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների՝ 440,945 և SS-ի 441,138 միջին ամսական վճարումների տարբերությունը կազմում է 193, որը պայմանավորված է շահառուների անհատական հաշվեհամարներին կատարված վճարումներով(պակաս վճարված ժառանգվող գումարի լրացուցիչ վճարման ենթակա գումարի ֆինանսավորում)* և բանկերի միջոցով հետվերադարձներով: Նշված ցուցանիշները չեն արտացոլվում SS-ի տվյալների բազայում:

Միևնույն ժամանակ, տվյալ ժամանակահատվածում շահառուների միջին ամսական թվաքանակը և անուն շահառուների թվաքանակը տարբերակելու համար, ևս մեկ անգամ հայտնում ենք, որ Աշխատանքային կենսաթոշակներ միջոցառման մասով պետական բյուջեում որպես արդյունքային չափորոշիչ հանդիսացող Կենսաթոշակառուների թիվ բյուջեի կազման ժամանակ հաշվարկվում և հաստատվում է տարեկան միջինացված թվաքանակ: Հետևաբար, համադրելի արդյունքներ ստանալու համար բյուջեի կատարման արդյունքների հաշվետվությունում ևս պետք է ներկայացվի հաշվետու ժամանակաշրջանի համապատասխան միջին թվաբանական քանակ:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրությամբ ներկայացված խեղաթյուրումները ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշներում տեղ գտած թվաքանակների և մեկնաբանությունների մասով չեն կարող ընդունելի լինել, քանի որ

հավեքննությամբ արձանագրված 37,609 շահառու չարտացոլելու հանգամանքը գոյություն չունի:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների համաձայն 12003 աշխատանքային կենսաթոշակներ միջոցառման վրա կատարվող ծախսը կազմել է 237,809,663.94 հազ.դրամ, իսկ կենսաթոշակառուների թիվ, մարդ նշված է 440945, ըստ ներկայացված բացատրությունների 2020թ. ընթացքում փաստացի ֆինանսավորվել է ամսական միջինը 441,138 շահառու:

Ամսական միջինով շահառուների հաշվառումը խեղաթյուրում է իրական պատկերը, քանի որ 237,809,663.94 հազ.դրամ գումարը բաշխվել է ոչ թե ամսական միջինով հաշվարկված 441,138 շահառուի միջև, այլ ըստ անվանացանկի փաստացի բաշխվել է 478,493 շահառուի միջև (շահառուների թվաքանակը ճշգրտված չէ ետ վերադարձերի մասով):

2. Ա. Ա. (գործի համար՝ .....703892) հաշվարկ կարգադրության համաձայն ընդամենը ստաժ հաշվարկվել է 46 տարի 6 ամիս 7 օր, որից սովորական աշխատանքային ստաժը՝ 41 տարի 11 ամիս 23 օր, ստացիոնար ուսուցումը 4 տարի 6 ամիս 13 օր: Տվյալ կենսաթոշակառուի կենսաթոշակի տարիքը լրացել է 01.01.2020թ-ին, գործի մեջ առկա տեղեկատվության համաձայն 15.01.2020 թ.-ի դրությամբ նա դեռևս աշխատել է: Հաշվարկ-կարգադրությունում ստաժի վերջ նշվել է 01.12.2019 թ., ինչի արդյունքում աշխատանքային ստաժը 1 ամսով պակաս է հաշվարկվել: Ինչպես նաև ստացիոնար ուսուցումը հաշվարկվել է 4 տարի 6 ամիս 13 օր (02.01.1973-15.07.1977թ.), սակայն դիպլոմի համաձայն ուսուցումը տևել է 4 տարի 11 ամիս 13 օր (01.09.1972թ.ից մինչև 15.07.1977):

Ս. Ջ. (գործի համար՝ .....703031) հաշվարկ կարգադրությունում կենսթոշակի չափը հաշվարկվել է 57050 ՀՀ դրամ, ստացված տեղեկատվության (շտեմարանի) համաձայն ընթացիկ գումարը կազմել է ՀՀ 55800 դրամ, սակայն վերահաշվարկի վերաբերյալ փաստաթղթեր առկա չեն:

Ջ. Գ. (գործի համար՝ .....703498) հաշվարկ կարգադրությունում կենսթոշակի չափը հաշվարկվել է 49850 ՀՀ դրամ, ստացված տեղեկատվության (շտեմարանի) համաձայն ընթացիկ գումարը կազմել է 55800 դրամ, սակայն վերահաշվարկի վերաբերյալ փաստաթղթեր առկա չեն:

6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

1. ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվել է 20.01.20թ., իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 12.02.20թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ուստի այն հրապարակվել է 14 աշխատանքային օր ուշացումով:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություններ.

ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: Կնքված պայմանագրի շրջանակում ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 07.02.2020թ կնքվել է համաձայնագիր և սահմանված ժամկետում հաշվառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Արձանագրված անհամապատասխանությունը կնքված պայմանագրի մասին հայտարարության հրապարակման ժամկետի ուշացման վերաբերյալ տեխնիկական վրիպակի արդյունք է, ինչը մասնակիցների շահերի ոտնահարման չի հանգեցրել և գնման գործընթացի արդյունքների վրա ազդեցություն չի գործել:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

2. ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-20/2 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում՝ գնահատող հանձնաժողովի 13.01.20թ. նիստում 11-րդ չափաբաժինը հայտարարվել

է չկայացած, սակայն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 22.01.20թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը, ուստի այն հրապարակվել է 6 աշխատանքային օր ուշացումով:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություններ.

ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի 11-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած գնահատող հանձնաժողովի 13.01.2020թ. նիստում, սակայն գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարության հրապարակման ժամկետի ուշացումը տեխնիկական վրիպակի արդյունք է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

7. Այլ փաստերի վերաբերյալ գրառումներ

1. ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/9 ծածկագրով 28.11.19թ. կազմակերպվել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման եղանակով գնման ընթացակարգ, որի արդյունքում 15.01.20թ. նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ և ԱՁ Ն. Մ. կոնսորցիումի հետ կնքվել է ՍԱԾ ԳՀԾՁԲ-20/9 ծածկագրով

պայմանագիր՝ ընդհանուր 40 800 000 ՀՀ դրամ արժեքով: Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում նախատեսված լուրջ փոփոխությունների իրականացումը հնարավոր չէ ամբողջ ծավալով լուծել ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման շրջանակում և առաջարկվել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների փոխարեն ձեռք բերել ծրագրային ապահովման կիրարկման ծառայություններ, իսկ ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման առարկան «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի սպասարկման մասով համարել ոչ արդիական: Միևնույն ժամանակ նշվել է, որ 2013 թվականից մինչ օրս «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի սպասարկումը իրականացվել է «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ կողմից, որը հանդիսանում է նշված տեղեկատվական համակարգի հեղինակը, ամբողջովին տիրապետում է տեղեկատվական համակարգի կառուցվածքին և ծրագրային գործիքակազմին, ուստի կարող է իրականացնել տեղեկատվական համակարգում անհրաժեշտ փոփոխությունները:

15.01.20թ. հրապարակված Սոցիալական ապահովության ծառայության 2020 թվականի գնումների պլանով Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկման և շահագործում ծրագրի շրջանակներում ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերումը նախատեսվել է իրականացնել գնանշման հարցման ընթացակարգի կիրառմամբ, ինչի համար նախատեսվել են 22 000 000 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոցներ, իսկ ծրագրային ապահովման կիրարկման ծառայությունների ձեռքբերումը նախատեսվել է իրականացնել մեկ անձից գնման ընթացակարգի կիրառմամբ, ինչի համար նախատեսվել են 50 400 000 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոցներ: ՍԱԾ ՄԱԾՁԲ-20/1 ծածկագրով 22.01.20թ. կազմակերպված ծրագրային ապահովման կիրարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով մեկ անձից գնման ձևի կիրառմամբ գնման ընթացակարգի արդյունքում 30.01.20թ. «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ»

ՍՊԸ հետ կնքվել է ՍԱԾ ՄԱԾՁԲ-20/1 ծածկագրով պայմանագիր՝ ընդհանուր 50 400 000 ՀՀ դրամ արժեքով: Նշենք նաև, որ 2018թ. և 2019թ. նշված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունները ձեռք են բերվել մեկ անձից գնման ձևի կիրառմամբ և այդ ծառայությունների մատուցման համար «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ հետ կնքված պայմանագրերի արժեքները կազմել են համապատասխանաբար 42 000 000 և 40 000 000 ՀՀ դրամ:

8.ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

թիվ	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ

1	ՀՀ աշատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը առաջարկվել է, համապատասխան ժամանակահատվածում շահառուների իրական թիվը արտացոլելու նպատակով՝ բյուջեի կատարման արդյունքային հաշվետվությունում ներկայացնել տվյալ ժամանակահատվածի փաստացի կատարված ծախսի փաստացի ստացված կենսաթոշակառուների թիվը, այլ ոչ թե ամսական միջինը: Ամսական միջինով շահառուների հաշվառումը խեղաթյուրում է իրական պատկերը, քանի որ 179,019,695.7 հազ.դրամ գումարը բաշխվել է ոչ թե ամսական միջինով հաշվարկված 443,263 շահառուի միջև, այլ ըստ անվանացանկի փաստացի բաշխվել է 470,876 շահառուի միջև (շահառուների թվաքանակը ճշգրտված չէ ետ վերադարձի մասով):	*«Չի ընդունվել»*		Համաձայն Ծառայության տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգերի շահագործման վարչության (այսուհետ՝ SS) դիտարկման՝ հաշվեքննության արձանագրությունում ներկայացված է շահառուների անվանական թվաքանակը՝ միջին թվաբանական քանակի փոխարեն: Միևնույն ժամանակ, տվյալ ժամանակահատվածում շահառուների միջին ամսական թվաքանակը և անվանական շահառուների թվաքանակը տարբերակելու համար, հայտնում են, որ Աշխատանքային կենսաթոշակներ միջոցառման մասով պետական բյուջեում որպես արդյունքային չափորոշիչ հանդիսացող կենսաթոշակառուների թիվ բյուջեի կազման ժամանակ հաշվարկվում և հաստատվում է տարեկան միջինացված թվաքանակ: Հետևաբար, համադրելի արդյունքներ ստանալու համար բյուջեի կատարման արդյունքների հաշվետվությունում ևս պետք է ներկայացվի հաշվետու ժամանակաշրջանի համապատասխան միջին թվաբանական քանակ:

9.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ աշատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը առաջարկվում է, համապատասխան ժամանակահատվածում շահառուների իրական թիվը արտացոլելու նպատակով՝ բյուջեի կատարման արդյունքային հաշվետվությունում ներկայացնել տվյալ ժամանակահատվածի փաստացի կատարված ծախսի փաստացի ստացված կենսաթոշակառուների թիվը, այլ ոչ թե ամսական միջինը: